ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սույն թվականի մայիսի 12-ին երկօրյա այցով Մայր Աթոռ ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը:

«Զվարթնոց» օդանավակայանում մեծարգո հյուրին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Օդանավակայանում դոկտ. Ֆիլիպ Փոթերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղական Անդրանիկ Հասրաթյանը:

Ժամը 17-ին Ս. Էջմիածնի Վեհարանում, ի բացակայության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարին ընդունեց և Նորին Սրբության անունից ջերմորեն ողջունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը: Ապա հարգարժան հյուրի և Տ. Սիոն արքեպիսկոպոսի միջև տեղի ունեցավ լրույց՝ եղբայրական ջերմ ու սրտագին մթնոլորտում: Զրույցի վերջում դոկտ. Ֆիլիպ Փոթերը Տ. Սիոն արքեպիսկոպոսին խնդրեց իր հարգալից եղբայրական զգացումները փոխանցել Ամենայն Հայոց Հայրապետին:

Ժամը 18-ին դոկտ. Փոթերը այցելեց հոգևոր ճեմարան և հանդիպում ունեցավ ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության հետ: Ճեմարանի հանդիսասրահում, հանուն ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ողջ ուսանողության, մեծարգո հյուրի գալուստը ջերմ խոսքերով ողջունեց Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը: Այնուհետև գործադրության դրվեց գեղարվեստական հակիրճ մի հայտագիր: Կատարվեցին մի շարք հոգևոր երգեր ու շարականներ ուսանողության կողմից: Հանդիպման վերջում ճեմարանի ուսանողներին ուղղված խրատական շինիչ խոսքով հանդես եկավ դոկտ. Ֆիլիպ Փոթերը:

Ժամը 19-ին Մայր տաճարում ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարը ներկա եղավ երեկոյան հանդիսավոր ժամերգությանը: Ավելի ուշ այցելեց Ծիծեռնակաբերդ, ծաղիկներ վետեղեց Հայ նահատակաց հուշարձանին և անմար կրակի շուրջ աղոթեց 1915 թվականի ցեղասպանությանը վոհ գնացած քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար:

Հետևյալ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանի ընդունարանում տեղի ունեցավ էկումենիկ հանդիպում ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի հետ: Հանդիպմանը մասնակցեցին Տ. Սիոն արքեպիսկոպոսը, Տ. Գևորգ եպիս-

Դոկտ. Ֆիլիպ Փոթերը Վեհարանում

կոպոսը, Տ. Հայկազուն վարդապետը, պրն. պրն. Հովհաննես Թոփուզյանը և Պարգև Շահբազյանը: Հանդիպման ընթացքում շոշափվեցին Եկեղեցիների միութենական շարժման հետ առնչվող մի շարք ընդհանուր հարցեր, ինչպես նաև ԵՀԽ-ի գործունեության շրջանակում Հայ Եկեղեցու հետագա գործակցության վերաբերյալ խնդիրներ:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Երևանի «Հրազդան» հյուրանոցի կինոսրահում դոկտ. Ֆիլիպ Փոթերը ներկա եղավ 1976 թվականին Ս. Էջմիածնում տեղի ունեցած մյուռոնօրհնության և Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակի տոնակատարության առթիվ նկարահանված փաստագրական կինոժապավենների ցուցադրմանը:

Ժամը 19.30-ին նույն հյուրանոցում Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը, ի պատիվ Մայր Աթոռի մեծարգո հյուրի, տվեց պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում խորհրդի նախագահի և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի միջև փոխանակվեցին բաժակաճառեր:

Մայր Աթոռում գտնվելու օրերին դոկտ. Ֆիլիպ Փոթերը ծանոթացավ մայրավանքի ու նրա շրջակայքում գտնվող պատմական հուշարձաններին, այցելեց Մայր Աթոռի թանգարանները, այդ թվում նաև նորակառույց «Ալեք և Մարի Մանուկյան գանձատուն», Երևանում եղավ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, մեկնեց Գառնի և ապա Ս. Գեղարդ վանք, ուր ջերմորեն հյուրընկալվեց վանահոր կողմից:

Մայիսի 14-ի առավոտյան Մայր Աթոռի հարգելի հյուրին ճանապարհելու համար «Էրեբունի» նորակառույց օդանավակայան էին եկել Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը, Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը, պրն. պրն. Հովհաննես Թոփուզյանը և Պարգև Շահբազյանը:

Օդանավակայանում դոկտ. Ֆիլիպ Փոթերը երախտագետ զգացումներով հրաժեշտ տվեց բոլորին և մեկնեց Թբիլիսի, ուր պաշտոնական հյուրը կլինի Վրաց Օրթոդոքս Եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի: